ԱԶԳ

[illegible]

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

# Գիրս մնա խրատող...

*«100 խրատ թոռնիկիս» գրքից*

[illegible]

...վնաս չի տա:

ՎԱԶԳԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հրապարակելով մի հատված Վազգեն Մնացականյանի անտիպ գրքից, «Ազգը» շնորհավորում է վաստակաշատ գրականագետին 80-ամյակի եւ մաղթում ամենայն բարիք:

ԱՌԱՋԱՐԿ

# Արա Գեղեցիկը Լենինի փոխարեն

Արգիշտին, ինչպես հայտնի է, Վանի Արարատյան հայկական պետության հզոր արքաներից է: Ըստ Ռաֆայել Իշխանյանի, Արգիշտի Ա-ն Խորենացու «Պատմության» մեջ հիշատակվող Արա Գեղեցիկն է: Ռ. Իշխանյանը նշում է, որ Արգիշտի անվան մեջ Ար-ը Արա անվան արմատն է, գիշտ-ը նորխուրիական վերջածանց է (առայժմ անհասկանալի), ի-ն՝ վերջավորություն:

Ընդունելով Արա Գեղեցիկի եւ Արգիշտի անձերի նույնությունը, փորձենք ապացուցել նաեւ այդ անունների նույնությունը, հենվելով ոչ թե լեզվաբանական օրենքների վրա, այլ ճարտարագիտական մտածողության վրա:

Գեղեցիկ բառի հականիշը ժամանակակից գրական հայերենում չկա եւ օգտագործվում է նրա ժխտական տգեղ ձեւը: Խոսակցական լեզուն պահպանել է տգեղի հոմանիշը՝ գեշ: Այն հանդիպում է մի շարք բառերի մեջ գիշ ձեւով եւ նույն՝ տգեղ, վատ, չար, հոռի, այլանդակ իմաստով. գիշատիչ (տգեղ), գիշակեր (վատ կերերով, դիակներով սնվող), գիշեր (ըստ երեւույթին գիշերեկո նախնական ձեւից՝ երեկոյի վատ, տգեղ, այլանդակ մասը) եւ այլն: Եթե ենթադրենք, որ 3000 տարի առաջ նախագրաբարյան հայերենում գեղեցիկ ասելու համար օգտագործել են գեշ-ի (գիշ-ի) ժխտականը (ինչպես ժամանակակից հայերենում գեշ ասելու համար օգտագործում են գեղեցիկի ժխտական տ-գեղ-ը), դա պիտի գրվեր ան, ոչ կամ ավելի հավանական է՝ տ ժխտական մասնիկի օգտագործմամբ, որտեղ տ-ն կարող էր դրվել ինչպես գիշից առաջ, այնպես էլ հետո՝ տգիշ կամ գիշտ: Ուրեմն Արա Գեղեցիկը կգրվեր Արագիշտ, կամ, հիշելով, որ Արայի արմատը Ար-ն է՝ Արգիշտ:

Մնում է Արգիշտի անվան վերջին ի-ի հարցը: Ավելի քան 150 տարի առաջ արդեն Պետերմանը կարծում էր, որ «տ» ժխտական մասնիկը հայերենում օգտագործվել է նաեւ «տի» ձեւով, օրինակ՝ տիեզերք բառում՝ անեզր: Նշենք, որ համաձայն Հ. Աճառյանի, «տի» մասնիկը նաեւ նշանակում է «մեծ»՝ տիեզերք՝ մեծ եզերք:

Այժմ անդրադառնանք Երեւան անվան ծագմանը: Համաձայն Հայկական սովետական հանրագիտարանի, Երեւան անունը սերում է ուրարտական Էրեբունի-ից: Այստեղ ունի-ն վերջավորություն է, իսկ էրեբ-ը այսպես կոչված «ուրարտական» լեզվում նշանակել է կառուցող, շինող: Կա եւ ռոմանտիկ մի տարբերակ, կապված Նոյի տապանի ավանդության հետ. իբր, երբ տապանը կանգ է առել Արարատի գագաթին եւ Նոյը ջրհեղեղից հետո տեսել է առաջին ցամաքը, գոչել է՝ «Երեւա՜ց», եւ քանի որ երեւացողը Երեւանի տեղն էր, ապա անունը դարձել է Երեւան (նաեւ Երեւան գալ հայտնվել արտահայտությունը):

Այժմ մեր բացատրությունը: Նախ անդրադառնանք Վան անվանմանը: Համաձայն Հ. Աճառյանի, վան նշանակում է բնակավայր, բնակատեղի: Այստեղից էլ վան մասնիկի օգտագործմամբ հայկական տեղանունների առատությունը՝ վանք (ք-ն հոգնակի ցույց տվող մասնիկ է), Իջեւան, Ավան, Հայկավանք, վերջապես Վանը՝ Հայաստանի հայտնի հնագույն մայրաքաղաքի անունը: Հնում վան-ը օգտագործվել է ժամանակակից կերտ, շեն, ական բնակավայրակազմական ածանցների փոխարեն: Ինչպե՞ս պիտի անվաներ Արա Գեղեցիկը իր կառուցած նոր բերդաքաղաքը, իհարկե իր անվամբ՝ Արավան, որն էլ հազարամյակների ընթացքում դարձել է Երեւան: Նշենք, որ հայ մատենագիտության մեջ Երեւանը հիշատակված է նաեւ Արեւան, Իրավան, Այրավան եւ մի շարք այլ ձեւերով: Ա-Է անցումը չափազանց տարածված է, հիշենք զավզակ-զեվզակ, արմեն-էրմենի, անել-էնել բառերը:

Ուրեմն՝ ո՞ւմ արձանը պետք է կանգնեցվի քաղաքի կենտրոնական հրապարակում: Իհարկե՝ նրա, ում անունով կոչվում է քաղաքը, ով հիմնադրել է քաղաքը՝ Արա Գեղեցիկ-Արգիշտի Ա-ի: Հետեւաբար Լենինի արձանի պատվանդանը պետք է ոչ թե հանել, ինչպես առաջարկում են, այլ նրա վրա բարձրացնել Արա Գեղեցիկի արձանը, պահպանելով նախկին արձանի համաչափությունները, որպեսզի չկրկնվի Ստալինի արձանը հանելուց հետո նոր՝ պատվանդանին անհամաչափ եւ աններդաշնակ արձան տեղադրելու պատմությունը:

[illegible]
Տեխ. գիտ. թեկնածու

digitised by A.R.A.R.@

